ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

№ ԱԴ/15.4/40303-2025

20.11.25

Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի
աշխատողների արհմիության նախագահ
Ա. Ասատրյանին

MTQ 50-02, 24-11-2025

Ի պատասխան ՀՀ վարչապետին ուղղված Ձեր՝ 10.10.2025թ., 29.10.2025թ.
թիվ 53-01, 62-01 գրությունների

Հարգելի՛ տիկին Ասատրյան

Համայնքային ծառայողներին լրացուցիչ միանվագ արձակուրդային վճարի սահմանման օրենսդրական փոփոխությունների առաջարկն ընդհանուր առմամբ ողջունելի է, սակայն նշված առաջարկը պետք է դիտարկել համայնքների բյուջեների կայուն հնարավորությունների համատեքստում:

Միաժամանակ, քաղաքացիական ծառայողների վարձատրության համակարգի հետ համեմատման տեսանկյունից, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ 2018 թվականի հուլիսի 1-ից սկսած քաղաքացիական ծառայողին համապատասխան դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունենալու դեպքում դասային աստիճանի համար հավելավճարն այլևս չի տրվում, մինչդեռ համայնքային ծառայության դեպքում նշված սահմանափակումը չի կիրառվում: Հետևաբար, նպատակահարմար է համայնքային ծառայողներին քաղաքացիական ծառայողների նման լրացուցիչ միանվագ արձակուրդային վճարի սահմանման օրենսդրական փոփոխության առաջարկին անդրադառնալիս պահպանել համակշռման տրամաբանությունը:

Նշենք նաև, որ համայնքների աշխատակազմերի հաստիքացուցակների վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ համայնքների միավորման գործընթացից հետո համայնքների աշխատակազմերի համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափերը քաղաքացիական ծառայության համարժեք պաշտոնների համեմատ ներկայումս ավելի բարձր են:

Միաժամանակ տեղեկացնենք, որ ներկայումս նախաձեռնվել է համայնքային ծառայության ոլորտի օրենսդրական փոփոխությունների գործընթաց, որի շրջանակներում Ձեր գրությամբ ներկայացված առաջարկը կքննարկվի համայնքների ղեկավարների հետ:

Ստորագրող
ԱՎԵՏԻՔ ԴԱՐԲԻՆՅԱՆ
1302860062

2025-11-21 16:58:29 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Հարգանքով՝ Ա. Դարբինյան

Կատարող՝ Համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Վարդանյան
Հեռ. 010515132